

ՊՈԼՍՈՅ ՍԿԵՒՌԱՅԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Իսթանպուլի «Թօփգարը» Պալատին Թանգարանի գրադարանի ոչ-մահմեդական բաժնին մէջ, 122 թիւով արձանագրուած այս ձեռագիրը Աւետարանի մասին առաջին անգամ մենք արտայայտուած ենք «Ժամանակ» օրաթերթի 2 Դեկտ. 1965 թիւին մէջ լոյս տեսած յօդուածով մը (թ. 18732) :

Մեր երկրորդ եւ քիչ մը աւելի մանրամասն ուսումնասիրութիւնը հրատարակուեցաւ «Շողակաթ» պարբերաթերթի 1966 տարուան ընթացքին լոյս տեսած միակ թիւին մէջ (էջ 94-98)¹ :

Մտադիր ենք անջատ գրքոյկով հրատարակել մանրամասն ուսումնասիրութիւն մը, յիշեալ Թանգարանի Տնօրէնութեան բարեհաճ արտօնութեամբ, կցելով նաեւ գունաւոր նմանահանութիւնները արժէքաւոր մանրանկարներուն, աջակցութեամբ Վենետիկի Միջինարեան Հայերէն տպարանին :

Այստեղ կը ներկայացնենք վերոյիշեալ Աւետարանի յիշատակարանները, ամբողջութեամբ, հաւատարիմ մնալով կրճատումներուն եւ կէտադրական գլխաւոր նշաններուն, փակագիրներուն մէջ առնելով մեր կողմէ կատարուած լրացումները : Չափազանց դժուարութեամբ է, բնագրին մէջ, վերջակէտն ու միջակէտը. մենք դրինք՝ ըստ իմաստին :

1. Սոյն ձեռագրի մասին գրած է նաեւ Deissmann D. A. 1933 թն, ըստ Հ. Հ. Ոսկեանի հաղորդումներուն. (Տէ'ս ի «Հանդէս Ամսօրեայ» ԶԱ տարի, 1967, թ. 4-6, տիւնակ 184). - Ծանօթ. Խմբ. :

Ա. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ (ԹՊ. 389ա-393բ)

Փա՛ռք համագոյ եւ անբաժանելի ս(ուր)բ Երրորդութե(ան)ն, Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյ սրբոյ. ամ(էն) :

Յորոյ արարչագործ խնամոցն մի՛շտ բարեգործին բոլոր եղականքս, որ ե՛ւ ի ձեռն արժանընդունակ սպասաւորաց իւրոցն կամաց՝ բազմամասնապէս ձրիւք զս(ուր)բ եկեղեցի իւր զարդարէ : Որ նոյն ինքն եւ ի նուազել ժամանակիս յառաջեալ ի քահանայապետական սպասահարկութիւնն եւ յաշտիճան եպիսկոպոսութեան սրբոյ Աթոռոյս եւ հռչակաւոր Ուխտիս Սկեւռայի զարժանապատիւ առաջնորդս զՏ(է)ր Սիմէոն, որ յազաղս ա(ստուա)ծասէր կամաց իւրոց ի պէտս հոգեւոր հրճուանաց եւ սրբավայելուչ ատու(ա)ծարնակ մաւրս մերոյ կաթողիկէ եկեղեցոյս, ընդ ա՛յլ նշանաւոր եւ ականաւոր զարդուցն յիշատակաց՝ ստացաւ եւ զա՛յս պանծալի քարս պատուական եւ զմարդարիտս զեղեցիկ, զա(ստուա)ծաւանդ, ճշմարտապատում, հոգեբուլիս վիպարութիւնն ա(ստուա)ծավայելուչ եւ փրկութիւնն ազորած անչիոթ մարդեղութե(ան) Բանին Ա(ստուծո)յ, որ զմեր մեղս իւրո՛վ մարմնովն վերացոյց, զի մեզ տացէ զի՛ւրն արդարութիւնն) :

Չոր եւ կարգ ըստ կարգի լի՛ր եւ համառաւտ պատմաբանութե(ամ)բ վերաքարոզեալ հռչակեցուցանէ ընդ ոլորտս տիեզերաց հոգիահարաչս այս ա(ստուա)ծա-

րանութիւն) . որ քերթողաւրէն ստուգաբանութե(ամ)բ կոչի Աւետարան՝ յիւրէն ընկալեալ զկոչումն անուանն. զի աւետի՛ս տայ աշխարհի, զԱ(ստուա)ծ մա՛րդ եղեալ եւ զմարդիկ ա(ստուա)ծացուցեալ, զերկայն պատերազմն քակեա՛լ եւ զթշնամիսն սիրելի որդիս եւ ժառանգս Ա(ստուծո)յ եղեալ :

Որոյ յոքնատենչ ըղձից փափաքմամբ նախալիշատակեալ Տ(է)րս Սիմէոն, մեծածախ պատրաստութե(ամ)բ հոգ տարեալ ս(ուր)բ մաղաղաթի, եւ զեղապանծ դրով, արհեստակիրտուած ոլորակաւք, բազմապայծառ զարդարուք, սքանչելափառ խորանաց ոսկեճաճանչ խառնուածով, յոքներանդ ծաղկանց պճնապաճոյճ յաւրինուածով, ոսկեղիբ դրոշմածիւք զա(է)րունական անուանսն փառազարդեալ, վերնծայեա՛ց սրբոյ տաճարիս, ի բերկրումն հոգեւոր եւ ի հրճուանս միխթարութե(ան) զալի աչաց սրբազան դասուց մանկանց նոր Սիովնի, եւ յիշատակ պանծալի՛ հոգեւո՛ր եւ մնացական ի՛ւր եւ ծնողաց իւրոց եւ բոլոր զարմից ըստ մարմնոյ :

Չայտու ժամանակաւ հանդիպիւր թըւականս ԶԻԲ (1273), յորում զգիտապետական զահագլխութիւնն վարէր (Տէ)ր Յակովբ քաջահանճար հռետոր եւ սրբազան կաթողիկոս :

Իսկ ա(ստուա)ծասէր եւ բարեպաշտն Լեւոն, որդի Հեթմոյ, զթագաւորութե(ան)ն առաջնորդէր զհանդէս, զորոյ զհեղահայեաց հանդարտութիւնն եւ զխաղաղասէր բարուցն խոնարհութիւնն եւ զանոխակալ մարդասիրութեանն տկարանա՛յ լեզու ի պատմել :

Ընդ որոյ բարեպաշտութեանն նազելի պարկեշտութիւնն նախանձաբեկ եղեալ բանասարկուն, ջանայր շիջուցանել ըղձաւուն տանս Հայոց : Եւ սպասաւորս կամայն իւրոց չարութե(ան) գտեալ զոմանս ի ծառայիցն նորա, որոց բազում ձիրս ի պարգեւաց ընկալեալ էին ի նմանէ, եւ ի հաւրէն նորա իշխանութիւնս գաւառա՛ց, բերդից, գեղից եւ եւս զանազան փառաւորութիւնն)ս :

Սակայն անմտաբար ի մաւռացոյնս եկեալ այնքան բարեգործութեանցն, եւ նմանք եղեալ Յուդայի, եւ ե՛ւս քան զնա չարագոյն, դաւաճանութիւնն մահու խորամանկէին ի վերայ անձինն արդարոյ, բնի՛կ հայրենի իւրեանց տ(եառ)ն թաղաւորի, որպէս շունք կատաղիք եւ ծառայք չարք գտեալք, ա(ստուա)ծասպան հրէիցն կցորդք :

Որոց նախադրուի չարին խորհրդոց վահրա՛մ իշխան տէրն Համուսին, եւ Լեւոն տէրն Մովսէսին, եւ Ապլիսա՛րիպ իշխան երեւելի : Սոքա ի յունաց :

Էր եւ ի հայոց համախոհ անաւրէնութեան սոցա զժողակ եւ չար խորամանկութեամբ լցեալ ապերախտ եւ տիրանենդ վատըշուքը ոմանք, որ երեւելի իսկ էին հռչակեալ ճարտարութեամբ կորովաբանութե(ան), ի(բ)րեւ զԱքիտոփեն զայն ի հնումն. եւ այլք յոլովք ի զինուորական զնդէ, զորս աւելորդ էր յիշատակելն, որք միաբանեալ էին յեղեռն խորհրդոյ տիրասպանութեանն :

Իսկ իբրեւ ի խնամոց Ա(ստուծո)յ իրադեկ լինէր արքայն դաւաճանութեանն, ա՛յն ինչ ապա եւ չարքն այնքիկ գիտելով զիւրիճ մտաց իւրեանց, ահաբեկ լինեն, կասկածելով ընդ անդործ մնալ խորհրդոյն չարի, զոր ծածկել չէ՛ր ի դէպ, այսր անդր ապա ճողոպրել ջանային : Սակայն զդուրն փորեալ անձամբք պարտ էր լնուլ : Յանկա՛րծ ի նրբափողոցս քաղաքին Սիսոյ իշխանն Համուսին հարեա՛լ լինէր յումեմէ՛ զկարեւիք խոցումն մահու : Իսկ տէրն Մովսէսին, հանդերձ Ապլիսարպիւ, իբր զչար ապստամբ յամուր բերդին անկեալ բռնանա՛յր, զզաւրս տաճկաց ի թիկունս կոչելով, որոց եւ զամուրն իսկ էր վաճառեալ. առ որս հրեշտակս արձակեալ՝ ի խաղաղութիւնն կոչէր արքայն. եւ անմիտքն զեռ եւս խիզախեալ յողիս ապաստան լեղեալ, կարծելով հաստատել զոր խորհէինն, թշնամանս եւս արքային դարձուցանէին. որոց եւ պատրիարքն յունաց լինէր թելադիր՝ յերթալն առ նոսա պատգամ յարքայէ :

Յայնժամ շրջափակեալ զամուրն Մովսէ-

ւաւն զաւրացն արքայի, եւ զործակցութեամբ Թ(եամ) Բ(ստուա) ծապալաւորաց ոմանց հայկազանց ներքաւարանակաց, յետ սուղ ինչ աւուրց զամուրն յինքեանս զբաւէին. եւ զլեւոն տէր բերդին ձերբակալ արարեալ: Իսկ Ապղարիպն վանդակաւ կախուեալ ի բերդէն հանդերձ եղբարբն ի բո՛ւռն անկանէր եւ զարգարադատ վճիռ մահու ընդուրէր: Չե՛ւ եւս այսոցիկ յաւարտ հասելոյ, փութով արձակէր արքայն զնախասացեալ Տ(է)րս Սիմէոն յամուրն Պէհեստնի, կասկածելով զի մի՛ ապստամբեցեն բնակիչք բերդին, յորում ի պահեստի կայր մանկիկ մի փոքրիկ ապստամբին Վահրամայ: Եւ սորա զվտանդ ծերութե(ան)ն անտես արարեալ, շտապով ա՛նդը հասանէր եւ զառաջի եղեալ դործն բարւո՛ք վճարէր ընդ ձեռամբ արքային զամուրն զբաւեալ:

Իբրեւ փոքր ինչ դրեթէ դու աղմկիս ներքոյ դադարէր, յորոց զյուրովս ոչ յիշատակեցաք, արտաքին թշնամիքն յառա՛ջ մատչէին. եւ փարուանայն իշխանն տաճկաց զաւաճանութե(ան) կամաւք յեզր սահմանաց աշխարհիս զարքայն կոչէր ի պատճառս սինաւու կտրելոյ. զորոյ իմացեալ զդաւ նենդութե(ա)ն, յետս դառնայր չո՛ւ արարեալ երթալ յանդիման լինել իլղանին Ապղարի, մեծամեծ ճղանց տալով զանձն վասն փրկութեան քրիստոնէիցս: Որոյ ճանապարհին Ա(ստուա) ծ լիցի առաջնորդ, տալով նմա շնորհս առաջի արքայից արքայի, եւ բազում փառաւք այսրէն փութով յաթոռ իւր զարձուցէ, ընդ երկայն աւուրս պահելով զնա հանդերձ ա(ստուա) ծապարդեալ որդւովքն իւրովք:

Արդ, յայսմ ամի յորում այսպիսի դիպուածովք ճգնէր արքայն եւ աշխարհս, եղեւ աւարտ զըջութեան սրբոյ Աւետարանիս ի սուրբ Ուխտս Սկեւռայ, ի ձեռն Ստեփանոսի ամենամեղ զրչի եւ Յովասափի նկարչի, հրամանաւ Տ(եառ)ն Սիմեոնի: Որոց ամենեցուն հրամայողին եւ կատարչացս վա՛րձս բարեաց լիցի գտանել ի Ք(րիստոս)է յաւուրն յետնում, յամենանուշակ արքայութեանն ան-

դադար փառաւորել զամենաս(ուր)բ Երրորդութիւնն յաւիտեանս յաւիտենից. ամեն՛ն:

Այս յիշատակարանը կը լրանայ 393ր էջի, երկրորդ սիւնակի, եօթներորդ տողին վրայ: Նոյն էջի, առաջին սիւնակի ներքեւի պարապուրեան վրայ, տարբեր եւ աւելի փոքր գրով, տարբեր ժամանակի մը մէջ գրուած է.

Յիշել մաղթեմ ընդ նմին եւ զկապող գրոցս:

Բ. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Թղ. 394ա-394բ)

Փառք անրաժանելի եւ միասնական ս(ուր)բ Երրորդութե(ան)ն Հաւր եւ Որդո եւ Հոգոյն ս(ր)բո, այժմ եւ միշտ:

Արդ, յիշեսցիք ի Ք(րիստոս)ս զխուռնաւիցի պարոն Սատաղան, որ վերստին ստացաւ զս(ուր)բ Աւետարանս ի հալալ ընչից իւրոց եւ եղիւր յիշատակ ի դիւզս որ կոչի Խուռնաւիլա, ի դուռն ս(ուր)բ Լուսաւորչին, իւր հոգոյն եւ իւր ծընողացն, հաւրն պարոն Սիրանոսին, եւ մաւրն եւ իւր կողակցին Ճիհանին. եւ իւր որդոցն Յովանէսին, Սատաղին եւ Յոհանիսին:

Չունի ոք իշխանութիւն զսայ ի դրանէս այս հանելոյ, ոչ աղբական եւ ոչ քահանա եւ ոչ սարկաւաք, ոչ ծախելով եւ ոչ դրաւելով եւ ոչ տեղէ ի տեղ փոխելով. եթէ յանտըղնի ոք, զմասն Յուդաւ յի առցէ եւ զպատիժն Կայենի կրէ. եւ յԱ(ստուածո)յ եւ յամ(ենայն) ս(ր)բոց նոր(ա) անիծեալ եղիցի: Եւ խնամով պահաւորքն ա(ւր)հնին ի յԱ(ստուածո)յ եւ յամ(ենայն) ս(ր)բոց նոր(ա). ամէն:

Դարձեալ յիշեցէք ի Ք(րիստոս)ս զպարոն Սատաղին թոռունքն. զԿարապետն, զՍատաղան, զՄկրտիչն, զՏառուրն, որ զս(ուր)բ Աւետարանս վերստին կազմել տուին, յիշատակ իւրեանց հոգւոցն եւ իւր(եան)ց համաւրէն ննջեցելոցն:

Դարձեալ աղաչեմք զձեզ, ով ս(ուր)բ քահանայք եւ ընթերցողք, յիշեցէք ի յաղաւթս ձեր զտրուպս ի վա(ր)դապետ(ա)ց զՀարայակետս, որ զս(ուր)բ Աւետարանս կազմեցի, եւ զհոգեւոր որդեակն իմ զՊետրոս մալաղն, որ կամակից եղաւ եւ ձեռնտու ի կազմել ս(ուր)բ Աւետարանիս:

Ա(ստուա) ծ զայն քահանայն ա(ւր)հ(ն)է որ ճընճոտ եւ աղտեղի ձեռաւք եւ աղտոտ լաթով չբռնէ, ըստակ լաթով եւ մաքուր ձեռաւք բռնէ, զվերոյդրեալքս յիշէ ամէն ի Ք(րիստոս)ս. ով որ զմեզ յիշէ, եւ ինքն յիշեալ լիցի ի Ք(րիստոս)սէ Ա(ստուածո)յ մերոյ. ամէն. աղա՛չեմ, աղա՛չեմ:

Կազմեցաւ ս(ուր)բ Աւետարանս ի թվ(ին) ՌԼԴ (1585): Ես Պետրոս արեւայս յայսմ ամի աշակերտեցա(յ) զորոց մաւտ ի Հարապետ վ(ա)րդ(ա)պ(ետ)ն:

Այս յիշատակարանը կը լրանայ 394ր էջի, երկրորդ սիւնակին վրայ, որուն ներքեւ, նոյն սիւնակի լայնքով՝ կայ չորս տողնոց գրութիւն մը, սակայն ամբողջութեամբ փերթուած, որմէ առաջին բառն է միայն ընթեռնի՝ «դառն»:

Նոյն էջին վրայ, ներքեւի պարապուրեան մէջ, գոյգ սիւնակի լայնքով, բռնալին տարբեր գրով (նոտրգիր) կը կարդանք.

«Ես Պետրոս տխմարս սակաւագիրս դիրեցի զի դիրքս կապած էր վ(ա)սն այն չեղեւ լաւ. անմեղադիր լերուք. ով եղբարս, երբոր կարդաս զսայ, ձեռքդ լուայ, ապա կարդա»:

Նոյն էջի (394բ) առաջին սիւնակին մօտ, ձախակողմեան լուսանցքին վրայ, վերէն վար գրուած է՝ վատ ձեռագրով մը հետեւեալը.

«Եւ զսոցին մայրն զմեծն Խաթուն եւ զՏուրան, եւ զսոցին դուստրն զՎարդէհուրն, եւ զփեսայն զԱղուպն, զխոճայ Մարտիրոսին, զԽաթուն Պահրէ, որդին զԱղուպն, եւ զհարսն զԴարդէհուրն, ըզԿարապետին դուստրն, որ զս(ուր)բ Աւետարանիս պակասութիւն տեսնեն, Ա(ստուա) ծ զիւրեանք ա(ւր)հ(ն)ե. ամէն»:

Հրտ.

Ճրտ. ԱՐԱՄ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ